ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԱՇՏԱՐԱԿԻ ԵՎ ՆԱԻՐԻԻ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

ԳՐԻԳՈՐ ԱՐՍԵՇՅԱՆ, ԿՈՐՅՈՒՆ ՂԱՖԱԴԱՐՅԱՆ, ՀԱԿՈԲ ՍԻՄՈՆՅԱՆ,
ԴԵՎՈՐԳ ՏԻՐԱՑՅԱՆ, ԱՐԱՄ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ՍՍՀՄ ժողովուրդների պատմության և մշակույթի հուշարձանների համահավաքի ստեղծման ծրագրով աշխատող ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի հայագիտական հետազոտությունների պրոբլեմային լաբորատորիայի և ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի միացյալ հնագիտական արշավախումբը[1] *1975 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, երթուղային արշավների միջոցով, հետազոտեց Աշտարակի և Նաիրիի շրջանների հետպալեոլիթյան բազմաթիվ հուշարձաններ, բացառությամբ նախկինում ուսումնասիրված միջնադարյան ճարտարապետական հուշարձանների*[2]*, ինչպես նաև՝ Օշականի հնավայրի, Աղց ավանի և Ամբերդ ամրոցի, որոնք պարբերաբար պեղվել են։ Հետազոտությունների ժամանակ հայտնաբերվեցին մի շարք անհայտ ինքնատիպ հնավայրեր։*

Հետախուզվող տեղանքը ծովի մակերևույթից բարձր է 1000—2100 մ և ընդգրկում է Հրազդան գետի միջին հոսանքը, Ծաղկունյաց լեռնաշղթայի հարավային լանջերը, Արայի լեռան հարավային ստորոտից տարածվող բլրաշատ հարթավայրը, Արագած լեռան հարավային լանջերը և նրան հարող Արարատյան դաշտը, որը սահմանափակվում է արևելքում Քասաղ գետի կիրճով, իսկ արևմուտքում՝ Շամիրամի կիրճով։

Ուսումնասիրվող հուշարձանները կարելի է բաժանել հետևյալ տիպերի. 1) միաշերտ, 2) երկշերտ, 3) բազմաշերտ բնակավայրեր, 4) առանձին դամբարանադաշտեր, որոնք չեն կապվում որևէ մոտակա՝ նույն ժամանակի բնակավայրի հետ, 5) առանձին կանգնած միջնադարյան եկեղեցիներ և կոթողներ, 6) այլ հուշարձաններ։ Հնավայրերի դասակարգումն ունի որոշակի պատմական իմաստ, որովհետև հուշարձանները հանդես են եկել տարբեր պատճառներով։ Այսպես, միաշերտ հուշարձանները հիմնականում բնորոշում են կոնկրետ սոցիալական-մշակութային սիստեմի պատմական ինքնատիպությունը, երկշերտ (երբեմն նաև եռաշերտ) հնավայրերն ավելի շատ վկայում են էկոլոգիական պայմանների ազդեցության կայունությունը, իսկ բազմաշերտ հուշարձանները, շատ հաճախ, հնարավորություն են ընձեռում խորհելու մշակութային ավանդույթների ժառանգականության մասին։

---

[1] Արշավախմբի աշխատանքներին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել հնագետ Գ. Մ. Սարգսյանը և արշավախմբի վարորդ Վ. Մխիթարյանը։

[2] Աշտարակի և Նաիրիի շրջանները հարուստ են միջնադարյան ճարտարապետական հուշարձաններով։ Մասնագիտական գրականության մեջ բազմիցս հիշատակվել են Հովհաննավանքի, Ծաղմոսավանքի, Տեղերի վանական համալիրները, Ագարակի, Աշտարակի, Արուճի, Ավանի, Արտաշավանի (Իլանչալան), Կոշի, Մուղնիի, Ոսկեվազի, Օշականի և Փարպիի եկեղեցիները, Արուճի քարավանատունը և այլ հուշարձաններ։

Մշակութային շերտերի քանակը որոշվում է վերգետնյա նյութերի մանրազնին հավաքման և ուսումնասիրման հիման վրա, ինչպես նաև՝ գետնի մակերեսին պահպանված ճարտարապետական մնացորդներով։ Նման մոտեցումը նախապես ենթադրում է ստացվող պատկերի որոշ աղքատացում։ Ներկայացվող հուշարձանները դիտվում են ժամանակագրական հերթականությամբ, այսինքն՝ միաշերտ բնակավայրերից նախօրոք բնորոշվում են հնագույնները, իսկ երկշերտ և բազմաշերտ հուշարձաններից նրանք, որոնց ստորին շերտերը ավելի վաղ շրջանին են պատկանում։

Միաշերտ հուշարձաններ։ Սեղանասար.— Միջին բրոնզի դարի բնակավայր, հին դամբարաններ։ Գտնվում է Նախիրի շրջանում, Եղվարդից 3,5 կմ հարավ-արևմուտք։ Այս տեղանքի ամենամեծ բլուրներից մեկի գագաթը ավարտվում է քառանկյան տեսք ունեցող, սեղանաձև ժայռոտ հարթությամբ (չափսերը՝ մոտ 50 մ×40 մ)։ Բարձունքի գագաթի դիտարկումների ժամանակ որևէ կառույցի հետքեր չհայտնաբերվեց, թեև բարձունքի որոշ հատվածներում մշակութային շերտը պահպանվել է բավարար հզորությամբ։ Պաշտպանական գծի՝ հիմքը կազմում են գագաթի ժայռի կտրվածքները, լանջերի մատչելի հատվածներում անկանոն թափված, հսկա տուֆե ժայռակտորներից ստեղծվել են արհեստական պատնեշներ։ Շինարարության հետքեր նկատվում են նաև բարձունքի հարավ-արևմտյան, հարավային, արևմտյան և հյուսիսային ստորոտներում։ Բլուրի մոտ նկատվում են նաև տուֆե հարթ սալերով կառուցված հին դամբարաններ։ Հավաքված վերգետնյա նյութերը պատկանում են միջին բրոնզե դարին, որոնց մեջ հանդիպում են մ. թ. ա. XX—XVIII դդ. բնորոշ գունազարդ խեցեղենի նմուշներ։

Գետամեջ 2.— Հնառճ մեգալիթյան շինություններ, հին դամբարաններ։ Գտնվում է Նախիրի շրջանի Գետամեջ (նախկին Քեթրան) գյուղի հյուսիս-արևմտյան կողմում, Հրազդան գետի աջ ափին՝ Գետամեջ 1 հուշարձանի դիմաց։ Գետամեջ 2-ի շինությունների մնացորդները խիստ ցրված են և այժմ շինարարական միասնական համալիր ներկայացնում են միայն ափամերձ բարձունքի վրա գտնվող ավերակները։ Այս բարձունքի ստորոտներում են նաև հին թաղումները։ Շինարարական մնացորդները, ամենայն հավանականությամբ, պատկանում են բրոնզե դարին։

Տեղեր 1.— Ուշ բրոնզեդարյան և վաղ երկաթի դարի ամրացված բնակավայր և դամբարաններ։ Գտնվում է Աշտարակի շրջանի Աղց (այժմ՝ Զորափ) և Տեղեր գյուղերի միջև, ճանապարհի ձախ կողմում, յուրաքանչյուրից մոտ 2,5 կմ հեռավորությամբ։ Տեղադրված է շրջակա բլուրների վրա։ Բնակավայրի պարսպաշղթան պահպանվել է միայն առանձին հատվածներում։ Նրա տարածքում նկատվում են ուղղանկյուն հատակագծով շինությունների հիմքեր։ Դամբարանների վերգետնյա մասերը ծածկված են ոչ բարձր թմբաձև գլաքարե լիցքով, որոնց տրամագծերը տատանվում են 1—5 մ սահմաններում։ Հուշարձանը բավական ավերված է։

Գնդաfար (Թուի-fար).— Վաղ երկաթի դարի ամրոց-բնակավայր և դամբարաններ։ Արայի լեռան հարավային ստորոտից սկսվում է մի հարթություն, որի վրա բարձրանում են հրաբխային ծագմամբ մի քանի բազալտե բլուրներ, որոնցից ծայր արևմտյանը՝ Թուի-քարը, Քասաղ գետի կիրճից գտնվում է մոտ 1,5 կմ արևելք։ Բլուրի գագաթը ծածկել են հին ամրոցի ավերակները, իսկ հարավային լանջերին և ստորոտին տարածված է եղել

անաշտպան բնակավայրը։ Բարձունքի հյուսիսային կողմում և հյուսիս-արևելյան լանջին ցրված են դամբարանները։ Ճարտարապետական շինությունները խիստ ավերված են, իսկ մշակութային շերտը շատ բարակ է, տեղ-տեղ բացակայելով։

Սահակաբերդ.— Վաղ երկաթի դարի պահակակետ։ Գտնվում է Աշտարակի շրջանի Ուջան (նախկին Վժան) գյուղից մոտ 3 կմ արևմուտք և Կոշ գյուղից մի փոքր ավելի հեռավորությամբ դեպի արևելք։ Պահակակետը զբաղեցնում է Արագածի ստրատեգիապես կարևոր ճյուղավորումներից մեկը, որն իր ժամանակակից Շամիրամ-ավանյան և Ուջանյան բնակավայրերի սահմանաբաժանն է։ Ամրությունը ստեղծված է ուղղանկյուն հատակագծով պարսպաշղթայից, երկշարք դրված բազալտե պատերով, որոնց միջի ազատ տարածությունը լցված է քարե լիցքով։

Սերկևիլ.— Միջնադարյան ոչ մեծ ամրոց, դղյակ և եկեղեցի։ Գտնվում է Աշտարակի շրջանի Օհանավան գյուղից մոտ 2 կմ հյուսիս-արևելք, Քասաղի կիրճի աջ ափին։ Դղյակը հատակագծում ունի քառանկյան տեսք, անկյուններում աշտարակատիպ հզորացումներով։ Մեծ բազալտե սալերով շարված հաստ պատերը հիշեցնում են ավելի վաղ շրջաններին բնորոշ, այսպես կոչված, «կիկլոպյան» շինությունները։ Դղյակը դրված է գետնախարիսխի (ստիլոբատ) վրա և, անկասկած, ժամանակին եղել է երկհարկանի։ Արևելյան պատի հյուսիսային կողմում պահպանվել է դարպասը։ Դղյակի հյուսիս-արևելյան անկյունից սկսվում է ամրոցի պարիսպը, որը արևելյան կողմով անցնելով կիրճի եզրով, շեղվում և միանում է դղյակի հարավ-արևմտյան անկյանը։ Կիրճի լանջին պահպանվել են դեպի ամրոց տանող հին ճանապարհի հետքեր, առանձին պարսպահատվածների մեջ թողնված մուտքեր։ Դղյակի հարավային կողմում գտնվում է ամրոցի կիսակործան ուղղանկյուն սրահով փոքրիկ եկեղեցին՝ պատրաստված սրբատաշ դեղնավուն տուֆ քարից։

Ամրոցի արևմտյան և հյուսիս-արևմտյան կողմում պահպանվել են ոչ մեծ բնակավայրի հետքեր։ Սակավաթիվ հնագիտական նյութերը և եկեղեցու ճարտարապետական մանրամասները հնարավորություն են տալիս ողջ համալիրը թվագրելու մ. թ. XI—XIII դդ.։

Հուշարձանը ուսումնասիրել է Ի. Ի. Մեշչանինովը[3], այն համարելով ֆեոդալական ժամանակաշրջանի շինություն։

Երկշերտ հուշարձաններ։ Զյանքերդ.— Վաղ բրոնզի դարի ամրոց-բնակավայր, վաղ երկաթի դարի ամրություն, դամբարաններ։ Գտնվում է Աշտարակի շրջանի Զյանքերդ-Արագածոտն (նախկին Ղոյթուր) գյուղից 1 կմ արևվելք։ Այն զբաղեցնում է Արագածի հարավային լանջին գտնվող երկաստիճան հրաբխային կոնի գագաթը, ներքին դարավանդը և բարձունքի ստորոտները։ Վաղ բրոնզի դարում ամրոցի պաշտպանության համար կառուցվել են երկու շարք պարիսպներ, արտաքին՝ ներքևի դարավանդը շրջապատող և ներքին՝ վերին հրապարակը պատնեշող։ Երկու պարիսպներն էլ զուրկ են ամրոցի պաշտպանությունը հզորացնող որմնահեցերից և աշտարակներից։

---

[3] П. И. Мещанинов, Циклопические сооружения Закавказья («Известия Государственной Академии истории материальной культуры», т. XIII, вып. 4—7, М.—Л., 1932, стр. 88—90, рис. 19—20).

Այս պատերի շինարարական տեխնիկայի համար բնորոշ է հսկա ժայռաբեկորների օգտագործումը, որոնք իրենց վրա լրացուցիչ մշակման որևէ հետք չեն կրում։ Քարերը միմյանց վրա հարմարեցված են բնական վիճակով։ Ամրոց-բնակավայրի տարածքից հավաքված վերգետնյա նյութի գերակշռող մասը կազմում է սև փայլեցված, վարդագույն աստառով և կոպիտ վարդագույն խեցեղենը, որը պատկանում է, այսպես կոչված, «կուր-արաքսյան» մշակույթին և թվագրվում է մ. թ. ա. 2400—2000 թթ.։ Մ. թ. ա. I հազարամյակի սկզբում հուշարձանի տարածքում կյանքը վերականգնվում է։

Մուղնի.— Բրոնզի կամ վաղ երկաթի դարի բնակավայր, մ. թ. ա. II հազարամյակի I կեսի դամբարանադաշտ, աշտարակատիպ շինություն, հին ջրամբար։ Գտնվում է Աշտարակի շրջանի Մուղնի գյուղից 0,5 կմ հյուսիս-արևմուտք։ Այստեղ հյուսիսից-հարավ ձգվում է մի բլրաշղթա, որի հարավային լանջերը բավական կտրուկ իջնում են դեպի Աշտարակի գոգավորությունը։ Բլուրների հարավային ստորոտում նշմարվում են խիստ ավերված հին բնակավայրի մնացորդներ։ Դամբարանադաշտը զբաղեցնում է բնակավայրից հյուսիս ընկած երկու բլուրները։ Հանդիպում են ինչպես ոչ մեծ, թմբաձև լիցքով ծածկված դամբարաններ, այնպես էլ գլաքարե շրջանակով օղակված, առանց վերգետնյա թմբի թաղումներ։ Արևելյան կողմի բլուրի վրա տարածվող ողջ դամբարանադաշտը շրջափակված է քարե սիմվոլիկ օղակով։ Աշտարակ—Ապարան խճուղու ձախ կողմում ընկած բլուրի գագաթին գտնվում են աշտարակատիպ շինության ավերակները։ Շինությունը կառուցված է եղել անմշակ բազալտե սալաքարերով և հիմքի մոտ ունի 8 մ տրամագիծ։

Ուշի.— Ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերի ամրոց-բնակավայր, դամբարանադաշտ, ջրամբարի մնացորդներ, միջնադարյան գյուղատեղի, ս. Սարգիս կոչվող վանական համալիր, մատուռ։ Գտնվում է Աշտարակի շրջանի Ուշի գյուղից 1—1,5 կմ արևմուտք։ Այստեղ դեպի Աշտարակի հարթավայրը ձգվող Ապարանի բարձրավանդակն առաջացնում է մի խումբ մեծ բլուրներ, և հուշարձանախումբը զբաղեցնում է այս բլրաշղթայի կենտրոնական մասում գտնվող բարձր և ընդարձակ բլուրը։

Ամրոցի արևմտյան հատվածը (չափերը՝ 110 մ×80 մ), հավանաբար, կառուցվել է ամենից վաղ, որին անմիջապես հպվում է ուժեղ ամրացված արևելյան հատվածը։ Այս մասի արևելյան պարսպահատվածի մեջ շատ լավ պահպանվել է ամրոցի 3 մ լայնությամբ դարպասը (նկ. 1)։ Պարիսպներից դուրս նկատվում են բնակելի շինությունների ավերակներ, որոնք ներկայանում են մի քանի խմբերով։ Ամրոցի հարավային կողմում գտնվող շինությունները հիմնովին ավերվել են միջնադարյան գյուղի և ս. Սարգիս վանական համալիրի կառուցման և գոյատևման ընթացքում։ Շինությունների մյուս խումբը արտաքուստ հպվում է ամրոցի հյուսիս-արևմտյան անկյանը, իսկ երրորդ խումբը գտնվում է վերջինից մի փոքր հյուսիս-արևելք։ Դամբարանադաշտի թաղումային շինությունների մեջ առանձնապես աչքի են ընկնում կեղծ կամարակապ ծածկով դամբարանները։

XI—XIII դդ. բնորոշ վանական համալիրը կառուցված է սրբատաշ, դեղնավուն տուֆից, պատերի վրա կան բազմաթիվ հայատառ արձանագրություններ։ Այն շրջապատված է բազալտե քարերով շարված պարսպով, որի պահպանված բարձրությունը գետնի մակերեսից հասնում է 4 մետրի։ Վա-

նական համալիրի շինությունների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում գլխավոր եկեղեցու հարավային կողմում կառուցված գավիթը[4]։

Մոտկան.— Վաղ երկաթի դարի քաղաքատեղի, միջնադարյան բնակության հետքեր։ Գտնվում է Աշտարակի շրջանի Ուջան գյուղից 0,5 կմ հյուսիս։ Այստեղ Արագածի հարավային լանջը հեղեղատների հետևանքով ակոսվելով, առաջացել են երեք մեծ, հյուսիսից-հարավ ձգվող բլրակներ, որոնց



Նկ. 1. Ուշի, ամրոցի դարպասը։

հարավային կողմը կտրուկ իջնում է դեպի Արարատյան դաշտը, իսկ հյուսիսայինը փոքր իջվածքի միջոցով ձուլվում է լեռնային զանգվածին։ Թեքությամբ հարավ իջնող կենտրոնական բլուրի գագաթը զբաղեցնում է միջնաբերդը։ Հյուսիսային, ամենից մատչելի կողմից այն պաշտպանված է եղել մի քանի շարք պարիսպներով։ Բազալտե խոշոր քարերով կառուցված պարիսպների պահպանված բարձրությունը որոշ հատվածներում հասնում է 6 մետրի (նկ. 2)։ Միջնաբերդում նկատվում են մոնումենտալ ճարտարապետության ավերակներ։ Պահպանվել են հին ճանապարհների բազմաթիվ հատվածներ։ Առանձնապես ուշագրավ է հյուսիսային կողմից միջնաբերդ տանող, բազալտե ժայռի մեջ փորված ճանապարհը (նկ. 3)։ Փորվածքի երկարությունը մոտ 150 մ, լայնությունը 4 մ, իսկ խորությունը 3 մ է։ Կենտրոնական բլուրի լանջերը և նրա աջ ու ձախ կողմերում գտնվող բլուրները ծածկված են բնակելի և այլ բնույթի շինությունների ավերակներով, որոնք նույնպես պարսպապատ են և զբաղեցնում են ավելի քան 50 հա տարածություն։

---

[4] С. Х. Мнацаканян, Архитектура армянских притворов, Ереван, 1952, стр. 6, 15, 41, 61, 71, 72, 87.

Նազրվան.— Վաղ երկաթի դարի քաղաքատեղի և դամբարանադաշտ, միջնադարյան գյուղատեղի, եկեղեցի։ Գտնվում է Աշտարակի շրջանի Նազրվան գյուղից 1,5 կմ հյուսիս և զբաղեցնում է Շահվերդ գետի կիրճի արևելյան ափին տարածվող հարթ դարավանդը։ Քաղաքատեղիի տարածքը մոտ 35—40 հա է, որից 1,5—2 հա զբաղեցնում է միջնաբերդը։ Սա գտնվում է քաղաքատեղիի կենտրոնական մասում՝ արևմտյան կողմով հոլված Շահվեր-



Նկ. 3. Մոտկան, միջնաբերդի հյուսիսային պարիսպները։

դի կիրճին, որի եզրով թույլ ամրացված մի պարիսպ է անցնում։ Մնացած երեք կողմերից միջնաբերդը պաշտպանված է հզոր պարիսպներով, որոնք հարավային կողմում եռաշարք են։ Միջնաբերդի անառիկությունը ապահովել են շուրջանակի պարսպի դեպի քաղաք ուղղված կողմերում դրված տասը հսկա աշտարակները, որոնք ունեն ուղղանկյան տեսք, պարսպաշղթայի հիմնական զանգվածից դուրս են խոյանում 4—5 մ, իսկ նրանց ճակատային երկարությունը հասնում է մինչև 17 մետրի։ Միջնաբերդի ներսում նկատվում են մոնումենտալ ճարտարապետության մնացորդներ։ Քաղաքատեղին ունեցել է բավական կանոնավոր հատակագիծ. ուղիղ փողոցների աջ և ձախ կողմերում տեղադրված են եղել բնակելի տները, որոնց ավերակները առանձնապես լավ են պահպանվել քաղաքի հյուսիսային կողմում։ Ամբողջությամբ վերցրած՝ քաղաքատեղին ունի հյուսիսից-հարավ ձգված տեսք, եղել է պարսպապատ, որի հետքերը պարզորոշ նկատվում են արևելյան և հարավային կողմում։

Դամբարանադաշտի թաղումները հանդես են գալիս քարե օղակով շրջափակված, գլաքարե թմբաձև լիցքով ծածկված դամբարանների, բազալտե սալաքարերով պատրաստված դոլմենատիպ շինությունների և այլ ձևով։ Միջնադարում միջնաբերդը և քաղաքատեղիի հարավային մասը վերաբնա-

կեցվել են. կառուցվել է եկեղեցի, որի հիմքերի միայն հետագիծն է այժմ նկատվում։ Նազրվան գյուղի մոտ, Օինակ կոչվող վայրում, շինարարական աշխատանքների ժամանակ ավերվել է մի փոքր կուրգան, որն ամփոփում էր մ. թ. ա. II հազարամյակի վերջերին պատկանող բավական նշանակալից թաղումնային համալիր։ Հուշարձանը ուսումնասիրել են Ս. Տեր-Հակոբյանը (1922 թ.) և Թ. Թորամանյանը (1924 թ.)[5]։



Նկ. 3. Մոտկան, միջնաբերդ տանող ճանապարհը։

Թղիթ.— Ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերի ամրոց, արհեստական լիճ, հին գերեզմաններ, ուշ միջնադարի բնակության հետքեր։ Գտնվում է Նաիրիի շրջանի Թղիթ գյուղից մոտ 2,5 կմ արևմուտք, իսկ Արագյուղից՝ 4 կմ հյուսիս։ Տեղադրված է Ծաղկունյաց լեռնաշղթայի հարավային ծայրամասում, կաղնու անտառներով շրջապատված կոնաձև բարձունքի գագաթին։ Ամրոցը պատնեշված է միմյանց հաջորդող աստիճանաձև երեք շարք պարիսպներով։ Դրանցից, իր անառիկությամբ, առանձնանում է ներքին պաշտպանական գիծը, որը ձգվում է բարձունքի հարթ գագաթի եզրերով և հզորացված է չորս զանգվածեղ ուղղանկյուն աշտարակներով (նկ. 4)։ Այս պարսպի արևմտյան կողմում, երկու աշտարակների միջև գտնվում է ամրոցի 5 մ լայնությամբ դարպասը։ Ամրոցի կենտրոնական մասի չափսերն են. երկարությունը՝ հյուսիսից-հարավ մոտ 130 մ, լայնությունը՝ արևելքից-արևմուտք մոտ 60 մ։

5 Ս. Տեր-Հակոբյան, Արմավիրի երկրորդ նորագյուտ արձանագրությունը («Նյութեր Հին Հայաստանի պատմության», ՀՍՍՀ կուլտուրայի պատմության ինստիտուտի աշխատություններ, հ. I, Երևան, 1935, էջ 145), Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1, Երևան, 1942, էջ 30—31, հ. 2, Երևան, 1948, էջ 288։

Մյուս երկու պարսպաշղթաները, որոնք տեղադրված են բարձունքի թեք լանջին, բացի պաշտպանական ֆունկցիաներից կատարել են նաև հենապատերի դեր, որոնց միջև առաջացած արհեստական դարավանդների վրա կան բնակելի շինությունների ավերակներ։ Ամրոցի կենտրոնական մասը ծածկված է բնակելի շինությունների ավերակներով։ Ջրամատակարարման հարցը լուծելու նպատակով ամրոցի հյուսիսային կողմում տարածվող հարթու-



Նկ. 4. Թղիթ, ամրոցի ներքին պաշտպանական գծի աշտարակը։

թյունում կառուցվել է մի արհեստական լճակ, որը գործում է մինչև այժմ։ Մեզ հայտնի մինչուրարտական բոլոր հուշարձաններից Թղիթ ամրոցը ամենից լավ պահպանվածն է։

Ամրոցի կենտրոնական մասում նկատվում են ուշ միջնադարյան բնակության հետքեր։

Շամիրամ.— Վաղ երկաթի դարի քաղաքատեղի, ջրավազան, դամբարանադաշտ, պաշտամունքային կառույցներ, միջին բրոնզեդարյան կուրգաններ, հելլենիստական ամրոց-բնակավայր։ Գտնվում է Աշտարակի շրջանի Շամիրամ գյուղում և նրա շրջակայքում։ Հուշարձանը, առանձնապես դամբարանադաշտը ուսումնասիրել են Թ. Թորամանյանը և Հ. Մարտիրոսյանը։ 1975 թ. արշավախմբին հաջողվեց հաստատել, որ Շամիրամում ուրարտական շրջանի բնակության հետքեր չկան, այլ մեծ տեղ են գրավում անտիկ ժամանակաշրջանի մնացորդները[6]։

---

6 Երևանի պետհամալսարանի հնագիտական արշավախումբը (ղեկավար՝ պատմական գիտությունների թեկնածու Գ. Արեշյան) 1975 թ. աշնանից սկսեց Շամիրամի սիստեմատիկ պեղումները (Գ. Ե. Արեշյան, Հ. Ե. Սիմոնյան, ԵՊՀ-ի հայագիտական հետազոտու-

Վանք-խարաբա.— Վաղ երկաթի դարի ամրացված բնակավայր, դամբարաններ, միջնադարյան գյուղատեղի, եկեղեցի։ Գտնվում է Աշտարակի շրջանի Ուշան գյուղից 2,5—3 կմ հյուսիս-արևմուտք և զբաղեցնում է Արագածից առանձնացող հրաբխային հրվանդանն ու նրա վրայի բարձունքը։ Անկանոն քառանկյան տեսքով ամրոցը տարածված է կոնաձև բարձունքի հարթ գագաթին (երկարությունը՝ մոտ 80 մ)։ Ամրոցի գագաթի պարագծով ձգվող պարիսպը ամրացված է որմնահեցերով և ելուստներով։ Հրվանդանի վրա կան բնակելի շինությունների հետքեր։ Բնակավայրի հարավային հատվածը գտնվում է թեք լանջի վրա, հենապատերի միջոցով բաժանված է դարավանդների և պարսպապատ է։ Բնակավայրի հյուսիսային և հյուսիս-արևմտյան կողմում ցրված են քարարկղային դամբարաններ, որոնց պատերը շարված են տարբեր մեծության կոպիտ մշակված բազալտով։ Դամբարանխցերը ծածկված են ոչ մեծ գլաքարե թմբաձև լիցքով։

Ամրացված-բնակավայրի տարածքում գտնվել են միջնադարյան խեցեղենի սակավաթիվ նմուշներ, որոնք, ամենայն հավանականությամբ, կապ ունեն բնակավայրից 0,5 կմ դեպի արևմուտք «Բքոյի գյուղ» կոչվող վայրում գտնվող միջնադարյան բնակավայրի հետ։ Այստեղ կան նաև մի քանի մետր հաստությամբ, մշակութային շերտի տակ թաղված, սրբատաշ տուֆ քարով կառուցված եկեղեցու ավերակներ։ Միջնադարյան ժամանակաշրջանի շինությունները կարելի է թվագրել մ. թ. XI—XIII դդ.։

Ջույգ աղբյուր (Ղոշաբուլաղ).— Վաղ երկաթի դարի դղյակ, խանդակ, ուշ միջնադարյան բնակության հետքեր։ Գտնվում է Աշտարակի շրջանի Անտառուտ գյուղից 3 կմ հյուսիս, Բյուրական-Արագածի գագաթ ճանապարհի աջ կողմում։ Դղյակը կառուցված է բազալտե ժայռի վրա և հատակագծում ունի կանոնավոր ուղղանկյան տեսք (չափսերը՝ 12×30 մ)։ Դղյակի հարավային կողմում, նրան անմիջապես հպված գտնվում են 4—5 սենյականոց տան ավերակները։ Երկու շինություններն էլ շրջապատված են ժայռափոր խանդակով (երկարությունը՝ ավելի քան 70 մ, լայնությունը՝ 4 մ, խորությունը՝ 1,5—2 մ)։ Դղյակի տարածքից հավաքված սակավաթիվ վերգետնյա նյութը թվագրվում է մ. թ. ա. XII—IX դդ.։ Ուշ միջնադարում հնավայրի տարածքի վերաբնակության վկայությունն են դղյակի հարավ-արևմտյան կողմից հավաքված խեցեղենի բեկորները։

Գետամեջ 1.— Վաղ երկաթի դարի և հելլենիստական շրջանի փոքր ամրոց։ Գտնվում է Նաիրիի շրջանի Գետամեջ (նախկին Քեթրան) գյուղի արևմտյան ծայրում, Հրազդան գետի ձախ ափին, Գետամեջ 2 հուշարձանի դիմաց։ Հրազդանի մեջ թափվող փոքր գետակն այստեղ առաջացնում է հրվանդան, որը դարավանդ առ դարավանդ ցած է իջնում արևելքից-արևմուտք։ Միջին դարավանդի վրա, իր պահպանվածությամբ, աչքի է ընկնում հյուսիսային կողմի մշակված բազալտե պարիսպը, որը հզորացված է որմնահեցերով և ուղղանկյուն ելուստներով։ Ամրոցի ներսում, պարսպին անմիջապես հպված, բնակելի սենյակների ավերակներ են, որոնցից մեկը լավ է պահպանված (չափսերը՝ 7×6,5 մ)։ Ամրոցի վերգետնյա նյութը հնարավորու-

---

Բյուրների պրոբլեմային լաբորատորիայի 1975 թ. կատարած հնագիտական աշխատանքները, «Բանբեր Երևանի համալսարանի», 1976, № 1, էջ 286—288)։

թյուն է տալիս ամրոցը թվագրելու մ. թ. ա. X—IX դդ.։ Երկրորդ անգամ այն վերաբնակեցվել է մ. թ. ա. III—I դդ.։

Բազմաշերտ հուշարձաններ։ Լուսակերտ (Արկել).— Պալեոլիթյան ժամանակաշրջանի բացօթյա կայան, վաղ երկաթի դարի ամրոց-բնակավայր, ուշ անտիկ շրջանի և միջնադարյան բնակության հետքեր։ Գտնվում է Նաիրիի շրջանի Լուսակերտ ավանի արևելյան ծայրամասում։ Հրազդանի կիրճի աջ

Նկ. 5. Օրգով, ամրոցի ընդհանուր տեսքը։

ափին առանձնանում է բաղալտե մի հրվանդան, որը կազմված է բնական դարավանդի վրայից ուղղահայաց վեր ելնող կողերով և սեղանաձև ժայռոտ գագաթով բարձունքից։ Ամրոցը (երկարությունը՝ 85 մ է, միջին լայնությունը՝ մոտ 40 մ) գտնվում է բարձունքի գագաթին, իսկ բնակավայրը տարածված է եղել դարավանդի վրա։ Ամրոցի պարիսպը երեք կողմերից անցնելով հրվանդանի եզրերով, չորրորդ՝ հյուսիսային կողմից հատում է այն։ Պարիսպը հզորացված է ինչպես որմնահեցերով, այնպես էլ ուղղանկյուն ելուստներով։ Ամրոցն ունեցել է երեք մուտք։ Հնավայրի տարածքից հավաքված մեծաքանակ վերգետնյա նյութը թվագրվում է մ. թ. ա. X—IX դդ.։ Ամրոցի տարածքում, հատկապես Լուսակերտին հպված հատվածներում հանդիպում են մեծ քանակությամբ վանակատե քերիչներ, սրածայրեր, միջուկներ և ցլեպներ, որոնք թվագրվում են մուստեի ժամանակաշրջանով, կան նաև ուշ անտիկ և միջնադարյան խեցեղենի բեկորներ։ Այս ամենը վկայում են հնավայրի երկարատև բնակեցվածության մասին։

Ախթամիր.— Վաղ բրոնզի դարի բնակատեղի, միջին բրոնզի դարի բնակության հետքեր, ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերի քաղաքատեղի, անտիկ բնակավայր, միջնադարյան գյուղատեղի, վաղ միջնադարյան եկեղեցի, բրոնզի դարի և վաղ երկաթի դարի դամբարանադաշտ, միջնադարյան գերեզմանոց։ Գտնվում է Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղից հարավարևմուտք, խաղողի այգիների մեջ։ Տարածվում է Քասաղ գետի կիրճի աջ ափին, ընդարձակ հրվանդանի վրա։

Ընդհանուր տարածությունը, որի վրա համատարած սփռված են «կուրգանաքսյան» մշակույթին բնորոշ խեցեղենի բեկորները, զբաղեցնում է մոտ 5—6 հա: Ախթամիրում կյանքը շարունակվել է նաև միջին բրոնզի դարում: Այդ են վկայում մ. թ. ա. XIX—XVI դդ. բնորոշ խեցեղենի (գունազարդ, ինչպես նաև կետազարդ դաջվածքով) սակավաթիվ նմուշները: Հուշարձանի տարածքում պահպանված ճարտարապետական շինությունների մեծ մասը պատկանում են ուշ բրոնզի և գերազանցապես վաղ երկաթի դարերին:

Վերգետնյա նյութի մեծ մասը նույնպես վաղ երկաթի դարի է և թվագրվում է մ. թ. ա. XI—IX դդ.: Այս ժամանակաշրջանի համալիրը կազմված է. ա) հրվանդանը զբաղեցնող միջնաբերդից, բ) նրա հարավ-արևմտյան կողմում տարածվող քաղաքատեղուց և գ) դամբարանադաշտից: Վաղ երկաթի դարի երկշարք պարիսպներով շրջափակված միջնաբերդը զբաղեցնում է մոտ 2,5 հա տարածություն: Ներքին պարիսպը հզորացված է հսկա աշտարակներով: Ամրոցի ներսում նկատվում են մոնումենտալ ճարտարապետության հետքեր: Ախթամիրում ներկայացված մյուս պատմական ժամանակաշրջանը հելլենիզմն է, որի վկայությունն են մ. թ. ա. III—I դդ. բնորոշ խեցեղենի բեկորները: Միջնաբերդի տարածքը բնակեցված է եղել նաև միջնադարում:

Հուշարձանը տարբեր ժամանակներում ուսումնասիրել են Թ. Թորամանյանը, Ի. Մեշչանինովը, Ե. Բայբուրթյանը, Ս. Սարդարյանը, Է. Խանզադյանը[7]:

Բազմակն (Փերսի).— Վաղ բրոնզի դարի բնակավայր (գուցե նաև ամրոց), միջին բրոնզի դարի բնակության հետքեր, վաղ երկաթի դարի ամրոց-բնակավայր, հին ջրավազաններ, մ. թ. ա. II—I հազարամյակների դամբարանադաշտ, միջնադարյան ամրոց: Գտնվում է Աշտարակի շրջանի Բազմաղբյուր (նախկին Թակիա) գյուղից 2,5 կմ հյուսիս, լքված Փերսի (Բուրավետ) գյուղի ավերակներից մի փոքր հարավ-արևմուտք: Ձրագած լեռան հարավարևելյան լանջին, Բազմակն կոչվող վայրում վեր է բարձրանում հարթ գագաթով մի հրաբխային կոն՝ Կարաղուշ անվամբ, որի գագաթը, լանջերը, արևելյան, հարավային ու արևմտյան ստորոտները զբաղեցնում է հուշարձանը: Բարձունքի հարավային և հյուսիսային լանջերը ցածրանում են դարավանդ առ դարավանդ: Սրանց եզրերին կառուցված են հսկա բազալտե սալերով պարիսպներ, որի հետևանքով բարձունքը որոշ հատվածներում գոտեվորված է 3—4 պարսպաշղթաներով: Հարավային լանջի դարավանդների վրա պահպանվել են հսկա շինությունների ավերակներ, որոնց պատերի սալաքարերը իրենց չափերով չեն զիջում պարսպի քարերին:

Վաղ երկաթի դարի պարիսպն առանձնապես լավ է պահպանվել հարավային դարավանդի վրա: Այն ունի երկշարք պատեր՝ լցված մանր դլաքարի լիցքով: Երկու ջրավազանների ավերակները գտնվում են բարձունքի արևելյան և արևմտյան ստորոտներում: Դամբարանադաշտի թաղումները ցրված են միմյանցից բավական հեռու, որոնց մեջ աչքի են ընկնում մեծ բազալտե սալաքարերով կառուցված դոլմենատիպ շինությունները: Միջնադարյան ամրո-

---

7 Թ. Թորամանյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 32—33, հ. 2, էջ 225: И. И. Мещанинов. նշվ. աշխ., Ս. Հ. Սարդարյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 199, Է. Վ. Խանզադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. III հազարամյակում, Երևան, 1967, էջ 12:

ցը գտնվում է բարձունքի գագաթին։ Պահպանվել են վերջինիս կրաշաղախով ամրացված, դեղնավուն տուֆ քարե աշտարակները և պարսպի հետքերը։ Միջնադարում վերականգնվել է նաև փոքր ջրավազանը, որի քարե պատերը շարվել են կրաշաղախով։ Հուշարձանը ուսումնասիրել են Ս. Տեր-Հակոբյանը[8] (1922 թ.) և երկրաբան Ս. Պ. Բալյանը (1973 թ.)։ ՀՍՍՀ Պետշինին կից հուշարձանների պահպանության վարչության ցուցակներում այն հիշատակված է Կալաչա անվամբ։

Լուսակերտ—2 (Քարաշամբ).— Վաղ բրոնզի դարի բնակավայր, ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերի քաղաքատեղի, մ. թ. ա. II—I հազարամյակների դամբարանադաշտ, անտիկ բնակավայր, միջնադարյան գյուղատեղի և եկեղեցի։

Գտնվում է Նաիրիի շրջանի Լուսակերտ ավանից 1,5 կմ հյուսիս և Քարաշամբ գյուղից նույնքան հեռավորությամբ հարավ։ Բնակավայրերը և քաղաքատեղին զբաղեցնում են Հրազդանի կիրճի աջ ափի ընդարձակ, ուղղահայաց կողերով հրվանդանը, իսկ դամբարանադաշտը՝ նրանից հարավ և հարավ-արևմուտք տարածվող դարավանդը։

Մ. թ. ա. III հազարամյակում հրվանդանի բնակեցվածության վկայությունն են «կուր-արաքսյան» մշակույթին բնորոշ խեցեղենի նմուշները։ 1966 թ. հետախուզական պեղումների ժամանակ դամբարանադաշտում ուսումնասիրվել են միջին բրոնզի դարի թաղումներ։ Ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերի քաղաքատեղին հարավային կողմից պաշտպանված է հզոր պարսպաշղթայով, որը հատում է հրվանդանը՝ ձգվելով մի կիրճից մյուսը։ Հրվանդանի հյուսիսային ծայրում գտնվում է միջնաբերդը և նրա պաշտպանական պարիսպը, որը նույնպես ձգվում է կիրճից-կիրճ։ Այս ժամանակաշրջանների թաղումները հանդես են դալիս 3—4 հիմնական տիպերով։

Անտիկ ժամանակաշրջանի բնակավայրը տեղադրված է եղել հին քաղաքատեղիի տարածքում, որի հետքերը ակնհայտ են։ Առանձնապես ուշագրավ է բազմաձևությամբ աչքի ընկնող գունազարդ խեցեղենը։

Միջնադարյան ժամանակաշրջանի բնակության մասին են վկայում սրբատաշ տուֆից պատրաստված եկեղեցու ավերակները և նրա շրջակայքում սփռված տների հիմքերը։ Այս ժամանակաշրջանի խեցեղենը նույնպես առատ է։

Հուշարձանախմբի դամբարանադաշտի հեաախուզական պեղումները կատարել է Լ. Կարապետյանը, 1966 թ.[9]։

Գազանոց.— Վաղ բրոնզի դարի ամրոց-բնակավայր, վաղ երկաթի դարի ամրոց-բնակավայր, բրոնզի և վաղ երկաթի դարերի դամբարանադաշտ, անտիկ շրջանի և միջնադարյան բնակության հետքեր։ Գտնվում է Աշտարակի շրջանի Արտաշավան գյուղից 2 կմ հյուսիս-արևելք և Սաղմոսավան գյուղից 3 կմ հյուսիս։ Հուշարձանը տարածվում է հյուսիսից-հարավ ձգվող հրվանդանի վրա, որի ծայրամասում ամրոց-բնակավայրն է (երկարությունը՝ 100—110 մ)։ Հյուսիսային կողմից հրվանդանը հատվում է երկու պարսպաշղթաներով։ Ներքին պարիսպը հատակագծում ստեղծում է մի քանի

---

8 Ս. Տեր-Հակոբյան, նշվ. աշխ., էջ 145—197։

9 Լ. Կարապետյան, Բրոնզի դարի և վաղ երկաթի նոր հուշարձան Հրազդան գետի ավազանում («Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4, էջ 278—288)։

պաշտպանական ելուստներ։ Վերգետնյա նյութերի հիմնական մասը կազմում են մ. թ. ա. III հազարամյակին բնորոշ խեցեղենի նմուշները։

Դովրի.— Վաղ բրոնզի դարի բնակության հետքեր, ուշ բրոնզի և վաղ Երկաթի դարերի ամրացված բնակավայր, ուրարտական ամրոց-քաղաք, հելլենիստական բնակավայր, ուշ միջնադարյան գյուղատեղի։ Գտնվում է Նաիրիի շրջանի կիսալքված Դովրի գյուղի արևմտյան ծայրում և Փոքրավան սովխոզից 1,5 կմ արևելք։ Ամրոցը զբաղեցնում է մոտ 350 մ երկարությամբ պայտաձև բարձունքը։

Մ. թ. ա. III հազարամյակում բլուրի բնակեցվածության վկայությունն են «կուր-արաքսյան» մշակույթին բնորոշ խեցեղենի նմուշները։ Վերգետնյա նյութի մյուս խումբը թվագրվում է մ. թ. ա. II հազարամյակի վերջերով և I-ի սկզբներով։ Հավանաբար այս ժամանակաշրջանին են պատկանում որոշ շինությունների ավերակները։

Բլուրի հարավային, բարձրադիր հատվածում է կառուցված ուրարտական ամրոցը, որը զբաղեցնում է շուրջ 1 հա տարածություն։ Ամրոցի ներսում նկատվում են լավ մշակված, բազալտե քարերով կառուցված ուրարտական մոնումենտալ ճարտարապետական շինությունների հիմքեր։ Ուրարտական շինությունների հետքեր նկատվում են նաև բլուրի հյուսիսային և արևելյան լանջերին և ստորոտում։ Ուրարտական ժամանակաշրջանի վերգետնյա նյութը ներկայացված է ինչպես հասարակ, այնպես էլ շքեղ, կարմիր փայլեցված պալատական խեցեղենով։

Հելլենիստական բնակավայրը տեղադրված է ուրարտական քաղաք-ամրոցի տարածքում։ Այս շրջանին պատկանող վերգետնյա նյութը խիստ բնորոշ է և բազմաքանակ (անզարդ և գունազարդ խեցեղեն, թասեր, ըմպանակներ)։ Միջնադարյան գյուղը զբաղեցրել է ուրարտական ամրոցի հարավային և արևելյան մասերը։ Ուրարտական շինությունների լավ մշակված քարերը XIX և XX դդ. առաջին քառորդում օգտագործվել են Դովրի գյուղի տների և գերեզմանների կառուցման ժամանակ։ Հուշարձանը առաջին անգամ ուսումնասիրել է Թ. Թորամանյանը[10]։

Կոշ.— Վաղ երկաթի դարի բնակավայր, աշտարակ, հելլենիստական ժամանակաշրջանի բնակության հետքեր, միջնադարյան քաղաքատիպ ավան, ամրոց։ Աշտարակի շրջանի Կոշ գյուղը հայտնի է նշանավոր ճարտարապետական հուշարձաններով (ս. Ստեփանոսի եկեղեցի՝ VII դ., Գրիգոր լուսավորչի եկեղեցի՝ XII դ., հանրահայտ երկու խաչքարերը)։ Ժամանակակից գյուղից դեպի հյուսիս-արևմուտք, ս. Ստեփանոս եկեղեցու շրջակայքում գտնվում է միջնադարյան մեծ ավան, որի շինություններից աչքի են ընկնում ջրավազանը, մառանները, գերեզմանոցի խաչքարերը և տապանաքարերը[11]։ Գյուղից հյուսիս, ժամանակակից գերեզմանոցի մոտ, Արագած լեռան հարավային լանջի ելուստներից մեկի վրա են գտնվում քառանկյուն հատակագծով ամրոցի ավերակները։ Ամրոցի պատերի հիմքերը շարված են բազալտով, իսկ վրան՝ կրաշաղախով ամրացված սրբատաշ կարմրավուն տուֆ։ Ամրոցի անկյունները եզերված են չորս հզոր, կիսակլոր աշտարակներով։ Պատերի պահպանված բարձրությունը գետնի մակերեսից հասնում է 3 մ,

10 Թ. Թորամանյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 36—37։

11 Նույն տեղում, հ. 2, էջ 233—235։

իսկ հաստությունը 2 մ է։ Միակ մուտքը գտնվում է հարավային պատի կենտրոնում և ուղղված է դեպի զառիթափը։ Իր գոյության ընթացքում ամրոցը բազմիցս վերականգնվել է։ Ճշմարտացի է Թ. Թորամանյանի այն ենթադրությունը, որ, ելնելով նրա հատակագծի յուրահատկություններից, ամրոցը կարելի է թվագրել ավելի վաղ շրջանով[12]։ Վերգետնյա նյութերի մեջ հանդիպում են նաև հելլենիստական գունազարդ կավանոթների բեկորներ, որոնք ավելի հավանական են դարձնում նման թվագրությունը։ Ամրոցից հյուսիս նկատվող բնակավայրի տարածքում հանդիպում են միջնադարյան խեցեղենի նմուշներ։

Ամրոցից հյուսիս-արևելք, բարձր բլուրների վրա պահպանվել են վաղ երկաթի դարի բնակավայրի հետքեր և բազալտե մեծ քարերով պատրաստված աշտարակաձև մի կառույց։

Կոշի հյուսիսային նախալեռներում հանդիպում են փոքր բազալտե դռներով միջնադարյան կացարան-քարայրներ։

Ավան.— Վաղ երկաթի դարի քաղաքատեղի, անտիկ շրջանի բնակության հետքեր, վաղ միջնադարյան բնակավայր։ Գտնվում է Աշտարակի շրջանի Ավան գյուղից 0,5 կմ հարավ։ Հին ավերակները զբաղեցնում են ընդարձակ հրվանդանը, որը, առանձնանալով Արագած լեռան հարավային լանջերից, առաջ է շարժվում դեպի Արարատյան դաշտը։ Բացի հրվանդանի մակերեսից, որտեղ տեղադրված է միջնաբերդը, հուշարձանը զբաղեցնում է նաև նրա հյուսիս-արևմտյան, հարավային և արևելյան լանջերը։ Վաղ երկաթի դարի միջնաբերդի պաշտպանական գիծը ամենուր անցնում է հրվանդանի ստորագծով՝ հատելով այն հյուսիսային ամենանեղ մասը։ Այս՝ ամենից մատչելի կողմում, միջնաբերդի պարիսպը ամրացված է երեք հզոր աշտարակներով։ Միջնաբերդի ներսում կառուցված են տարբեր տեսակի շինություններ։ Քաղաքատեղին նույնպես շրջափակված է պարսպով։ Նրա հյուսիս-արևմտյան հատվածը և մասնավորապես հյուսիսայինը զբաղեցված են բավական խիտ բնակելի շինությունների ավերակներով։ Քաղաքատեղիի երրորդ՝ հարավային, հատվածը զբաղեցնում է հրվանդանի հարավ-արևմտյան լանջը։ Այստեղ հենապատերի օգնությամբ ստեղծված է աստիճանաբար ցած իջնող արհեստական դարավանդների մի ամբողջ շարք։ Քաղաքատեղիի չորրորդ հատվածը տեղադրված է միջնաբերդի արևելյան պարսպի տակ և զբաղեցնում է մոտ 20 մ լայնությամբ արհեստական դարավանդը։ Քաղաքատեղիի և միջնաբերդի տարածքից գտնվել է մ. թ. ա. II հազարամյակի վերջերին և I-ի սկզբներին պատկանող խեցեղենի մեծ հավաքածու։ Արշավախմբի աշխատանքների ժամանակ հուշարձանի տարածքում հայտնաբերվել են նաև անտիկ խեցեղենի նմուշներ։

Մ. թ. IV—VII դդ. քաղաքատեղիում առաջացել և գոյատևել է ոչ մեծ մի բնակավայր, որը ժամանակակից է ներկա Ավան գյուղի տարածքում պահպանված ճարտարապետական կառույցներին. վերջիններից հատկապես աչքի է ընկնում բազիլիկ եկեղեցին։ Այս ժամանակաշրջանին է պատկանում միջնաբերդում դրված քառակող քանդակազարդ հուշասյունը։ Միջնադարյան խեցեղենը հանդես է գալիս մեծ առատությամբ։

---

12 Նույն տեղում, էջ 234։

Օրգով.— Վաղ երկաթի դարի ամրոց-բնակավայր, անտիկ բնակավայր, ուշ միջնադարյան բնակության հետքեր։ Գտնվում է Աշտարակի շրջանի Օրգով գյուղի հարավ-արևմտյան ծայրում։ Այստեղ Արագած լեռան ճյուղավորումներից մեկի վրա վեր է բարձրանում հրաբխային ժայռոտ ելուստ, որի գագաթը զբաղեցնում են վաղ երկաթի դարի ամրոցի ավերակները (նկ. 5)։ Սրան ժամանակակից անպաշտպան բնակավայրը տարածվում է բլուրի ստորոտին և հյուսիսային ու հարավային լանջերին։ Ժայռոտ գագաթը արհեստականորեն հարթեցված է և շրջափակված երկշարք, պարուրաձև հատակագիծ ունեցող պարիսպներով։ Պաշտպանական գծի արևմտյան հատվածում պահպանվել է 14 մ ճակատային երկարությամբ որմնահեցը։ Ամրոցի պաշտպանական համալիրի մեջ է մտնում նաև գաղտնուղին, որը պաշարումների ժամանակ պաշտպաններին ապահովել է ջրով։ Այն փորված է տուֆի մեջ, գետնի մակերեսից մի քանի մետր խորության վրա։

Վաղ երկաթի դարի բնակելի տները տեղադրված են կամ ոչ մեծ դարավանդների վրա, կամ էլ՝ շինարարության համար հարմար այլ վայրերում։

Ամրոց-բնակավայրի տարածքից հավաքված վերգետնյա նյութի մեջ զգալի է մ. թ. ա. II հազարամյակի վերջերի և I սկզբների, ինչպես նաև՝ անտիկ ժամանակաշրջանի խեցեղենը։ Ուշ միջնադարյան խեցեղենը խիստ սակավ է։

Վերոհիշյալ միաշերտ, երկշերտ և բազմաշերտ հուշարձաններից բացի արշավախումբը ուսումնասիրել է նաև մի քանի ինքնատիպ հնավայրեր, որոնց ունեցած կապը որևէ հին բնակավայրի հետ հնարավոր չեղավ պարզել։

Կուռ-Թափա.— Տարբեր ժամանակների հուշարձանների համալիր։ Գտնվում է Աշտարակի շրջանի Օրգով գյուղից հյուսիս, Ամբերդ հնավայրից հարավ-արևելք և զբաղեցնում է Արագած լեռան բարձրադիր սարահարթերից մեկը՝ Ամբերդի կիրճի աջ ափին։ Այստեղ կան կիկլոպյան շարվածքով առանձին շինություններ և պատեր, քարե շրջանակի մեջ վերցված դամբարաններ։ Առանձնապես հետաքրքիր են մշակված երկարուկ քանդակազարդ պատկերներով երկու քարերը։ Միջնադարյան շինությունների ավերակները բավական բազմատիպ են։ Մի բլրակի գագաթին պահպանվել են սրբատաշ բազալտից պատրաստված մատուռի ավերակներ և խաչքարերի բեկորներ։ Տեղանքի կենտրոնական մասում, ոչ մեծ բարձրունքի վրա նկատելի են քանդակազարդ բազալտե սալաքարերը կրաշաղախով ամրացված եկեղեցու պատերի ավերակներ։ Այս երկու բլրակների վրա էլ կան տապանաքարեր և հուշասյուներ։ Ամենայն հավանականությամբ, Կուռ-Թափայի միջնադարյան համալիրը առնչվում է Ամբերդի հետ, գոյատևել է մ. թ. XI—XIII դդ. և Զաքարյանների շինարարական գործունեության արգասիք է։

Վերին-Նալեր.— Միջին բրոնզի դարի դամբարանադաշտ, վաղ երկաթի դարի թաղումներ։ Գտնվում է Աշտարակի շրջանում, շրջկենտրոնից մոտ 3 կմ արևմուտք, Աշտարակ—Ագարակ ճանապարհի աջ և ձախ կողմերում։ Դամբարանադաշտը տարածվում է խաղողի և խնձորի այգիների, մշակելի դաշտերի միջև, իսկ նրա հյուսիսային մասը գտնվում է դարավանդի հարավային լանջին և այդ դարավանդի հարթ մակերեսով ձգվում է մինչև Փարպի գյուղի այգիները։ Թաղումները դամբարանադաշտի զանազան հատվածներում տարբեր խտությամբ են։ 1976 թ. մեր արշավախմբի ջոկատը (ղեկավար՝ Հ. Սիմոն-

յան) հետախուզական աշխատանքներ կատարեց դամբարանադաշտի տարածքում։ Պեղված դամբարանները հիմնականում քարարկղային կամ հիմնահողային թաղումներ էին, որոնք ծածկված էին բավական մեծ, անմշակ տուֆե սալաքարերով։ Վերջիններս օղակված էին դլաքարե մոդական շրջանակներով և ապա ամբողջապես ծածկված մանր դլաքարե և հողե թմբաձև լիցքով, որոնց տրամագիծը երբեմն հասնում է 30 մետրի։ Դամբարաններում հայտնաբերվել են միջին բրոնզի դարին բնորոշ գունազարդ, կետազարդ, սև փայլեցված և կոպիտ խոհանոցային խեցեղենի նմուշներ (թասեր, կարասներ, կճուճներ), ինչպես նաև՝ վաղ երկաթի դարի կանելուրազարդ կավանոթներ, սերդոլիկե հուլունքներ և բրոնզե ղենքեր։

Արագյուղ.— Երկու եռանավ բազիլիկ եկեղեցիներ և միջնադարյան գերեզմանատուն։ Գտնվում է Նաիրիի շրջանի Արագյուղում։ Եկեղեցիները բազմիցս վերանորոգվել են, որի հետևանքով նրանց նախկին հատակագծերը մի շարք փոփոխությունների են ենթարկվել։ Պահպանվել են մեծ քանակությամբ վաղ միջնադարին բնորոշ զարդամոտիվներով քարեր։ Մեծ եկեղեցու վերանորոգման ժամանակ օգտագործվել են սրբատաշ, եզրերը հանած (ռուստովկայով) բազալտե քարեր, որոնք բացառված չէ, որ տեղափոխվել են Դովրիում գտնվող ուրարտական ամրոցից, քանի որ մոտակայքում նման քարերով այլ շինություններ չկան։ Գյուղի հին գերեզմանոցում հանդիպում են 2—3 մ երկարությամբ քարե սյուների միջնամասեր, որոնց ինչ շինության պատկանելն անհայտ է։ Եկեղեցիների ճարտարապետական ձևերը և զարդանախշերը հիմք են տալիս Արագյուղի հոդևոր շինությունները թվագրել մ. թ. V—VI դդ.։

Կատարված հետազոտությունները հնարավորություն են ընձեռում նշանակալից ճշգրտումներ մտցնել Աշտարակի և Նաիրիի շրջանների հնագիտական քարտեզի մեջ։ Այս ուղղությամբ կատարվելիք հետագա աշխատանքները ոչ միայն ի հայտ կբերեն նոր հուշարձաններ, այլև հնարավորություն կտան հավաքված նյութի հիման վրա որոշակի նախնական ենթադրություններ անելու Հայաստանի այս տարածքի հին մշակույթների զարգացման ուղիների մասին։

АРХЕОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ В АШТАРАКСКОМ И НАИРИЙСКОМ РАЙОНАХ АРМЯНСКОЙ ССР

ГРИГОР АРЕШЯН, КОРЮН КАФАДАРЯН, АКОП СИМОНЯН, ГЕВОРК ТИРАЦЯН, АРАМ КАЛАНТАРЯН

Резюме

Совместная археологическая экспедиция Института искусств, Института археологии и этнографии АН Арм. ССР и Центра арменоведческих исследований Ереванского гос. университета, работающая по программе подготовки свода памятников истории и культуры народов СССР, в августе—сентябре 1975 года провела обследование Аштаракского и Наирийского районов Армянской ССР. Экспедицией были изучены памятники постпалеолитического возраста, расположенные более чем в 30-и пунктах. Древнейшие из них относятся к развитому и позднему

этапам куро-аракской культуры (середина и вторая половина III тысячелетия до н. э.). В этой группе особо выделяются поселения Ахтамир, Базмакн, Дзянберд. В среднем бронзовом веке число поселений уменьшилось. Следы обитания этой эпохи выявлены в Ахтамире, Базмакне, Сеганасаре. Резкое увеличение количества поселений и крепостей на данной территории имело место в позднем бронзовом и раннем железном вв. Памятники этой эпохи обследованы в 22-х пунктах. Памятники следующего периода представлены урартской крепостью в Доври. Следы эллинистической культуры выявлены в 7-и пунктах. Средневековые памятники представлены 12-ью поселениями и крепостями IV—XIII вв. н. э.

Во время проведенных разведок был открыт ряд неизвестных ранее уникальных археологических объектов: укрепленное поселение Газаиоц, сохранившее слои раннего бронзового и раннего железного веков; поселение Сеганасар среднего бронзового века: городище Моткан-берд, крепости, поселения и укрепления Тгит, Топ-кар, Гетамеч, Саакаберд, преимущественно относящиеся к раннему железному веку; не связанный с каким-либо поселением некрополь Верин-навер среднего бронзового века; остатки средневековых монументальных сооружений в селении Арагюх и местности Кур-тапа.